

մնայ, իր աթոռը պիտի չդառնայ, այլ կարմիր վանք պիտի երթայ եւ մինչեւ ցմահ անկէ դուրս պիտի չելլէ (Ջամբու, անբ), թէպէտ եւ ուրիշ տեղ (Գիււան Գ. էջ 20) կ'ըսուի՝ թէ կաթողիկոսը վերջին կէտը չէր պահանջեր: Կաթողիկոսն այս ամէնը ծանոյց Պոլսոյ Պատրիարքին (Գիւ. Գ. 43):

Գէորգ Եպս. կ'ուղեւորի դէպ ի կարմիր վանք: Ի կարին սեղանաւոր Ղազար Աղա Կաթողիկոսին դարձեալ նամակ մը կը գրէ, եւ կը խնդրէ որ զԳէորգ դարձեալ Արծաթահանքի Առաջնորդ դնէ. սակայն Կաթողիկոս անդդուելէ կը մնայ (Գիւ. Գ. 43) եւ Գէորգ Եպ. կը մնայ կարնոյ կարմիր վանքը:

Այս ատեններն Ախալցխա քաղաքը կարնոյ կարմիր վանոց վիճակ էր. կարմիր վանքի Առաջնորդը նուիրակ կը ղըկէր այնտեղ պտղի եւ դրամ հաւաքելու համար: Արդ, 1764ին վանուց Յակոբ Առաջնորդն Ախալցխա կը ղըկէ Գէորգ Եպ.ը:

Ախալցխա քաղաքն արդէն անկէ յիսուն տարի յառաջ մուտ գտած էր կաթողիկէութիւնը եւ այնչափ յառաջացած, որ կաթողիկէ Հայերն երեք եկեղեցի ունէին, կային կաթողիկեայ վարդապետներ ու քահանաներ: Ինքն Սիմէոն Կաթողիկոս կը գրէ՝ թէ քաղքին Հայերու մեծ մասը կաթողիկէ էր: Գէորգ Եպ. այնտեղ հասնելուն պէս, համարձակ կաթողիկէից պէս կը վարուէր ու քարոզէր, ինչպէս արդէն ի հնուց ունէր նոյնը սրտին մէջ. «Ապա ի գնալն